**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

**“11” դեկտեմբերի 2023 թվական** **N 14-Ն**

**ք. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 4-Ի ԹԻՎ 01-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՎՃԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փոստային կապի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 45-րդ կետի և 10-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով.

1. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 2023 թվականի հունվարի 4-ի «2023 թվականի փոստային վճարման պետական նշանների թեման, գործողության մեջ դնելու ժամկետը, անվանագինը և տպաքանակը սահմանելու մասին» N 01-Ն հրամանի հավելվածում կատարել հետևյալ լրացումները.

1) «5.12» կետից հետո լրացնել նոր «5.13» կետ հետևյալ բովանդակությամբ՝

«

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5.13 | Մանսուրյան միջազգային մրցույթ | 1 նամականիշով բացիկ | IV եռամսյակ | 400 | 1000 |

»

2) «7.1» կետից հետո լրացնել նոր «7.2» կետ հետևյալ բովանդակությամբ՝

«

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7.2 | Արամ Խաչատրյան | 1 նամականիշ | IV եռամսյակ | 500 | 15 000 |

»:

2. Հաստատել փոստային վճարման պետական նշանների նմուշները՝

1) Մեծանուն հայեր. Մանսուրյան միջազգային մրցույթ թեմային նվիրված «MANSURIAN. INTERNATIONAL COMPETITION. ՄԱՆՍՈՒՐՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ. TIGRAN MANSURIAN. ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐՅԱՆ. 85. ԱՄՅԱԿ. ANNIVERSARY. Հայ կոմպոզիտոր. Armenian composer. ՄԱՆՍՈՒՐՅԱՆ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ. MANSURIAN. INTERNATIONAL COMPETITION» 1 նամականիշով բացիկի, համաձայն N 1 հավելվածի:

2) Աշխարհահռչակ հայեր. Արամ Խաչատրյան թեմային նվիրված «Արամ Խաչատրյան. Aram Khachaturian» 1 նամականիշի, համաձայն N 2 հավելվածի:

3) Ֆլորա և ֆաունա. Հայաստանի ֆլորա և ֆաունա թեմային նվիրված «Կովկասյան սկյուռ. Sciurus anomalus», «Սովորական աղվես. Vulpes vulpes», «Հիրիկ Դմիտրիի. Iris demetrii» և «Տանձենի կովկասյան. Pyrus caucasica» 4 նամականիշի, համաձայն N 3, N 4, N 5 և N 6 հավելվածների:

4) Հայաստանի տեսարժան վայրեր. Հայաստանի տեսարժան վայրեր թեմային նվիրված «Հառիճավանք, VII-XIII դդ., Շիրակ. Harichavank Monastery, VII-XIII cc., Shirak», «Դեբեդի կիրճ, Լոռի. Debed Canyon, Lori», «Խոսրովի արգելոց (Վահագնի ջրվեժ), Արարատ. Khosrov Reserve (Vahagn Waterfall), Ararat» և «Գոշի լիճ, Տավուշ. Lake Gosh, Tavush» 4 նամականիշի, N 7, N 8, N 9 և N 10 հավելվածների:

3. Գործողության մեջ դնել՝

1) Մեծանուն հայեր. Մանսուրյան միջազգային մրցույթ թեմային նվիրված «MANSURIAN. INTERNATIONAL COMPETITION. ՄԱՆՍՈՒՐՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ. TIGRAN MANSURIAN. ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐՅԱՆ. 85. ԱՄՅԱԿ. ANNIVERSARY. Հայ կոմպոզիտոր. Armenian composer. ՄԱՆՍՈՒՐՅԱՆ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ. MANSURIAN. INTERNATIONAL COMPETITION» 1 նամականիշով բացիկը, անվանագինը՝ 400 դրամ, տպաքանակը՝ 1000 հատ:

2) Աշխարհահռչակ հայեր. Արամ Խաչատրյան թեմային նվիրված «Արամ Խաչատրյան. Aram Khachaturian» 1 նամականիշը, անվանագինը՝ 500 դրամ, տպաքանակը՝ 15 000 հատ:

3) Ֆլորա և ֆաունա. Հայաստանի ֆլորա և ֆաունա թեմային նվիրված «Կովկասյան սկյուռ. Sciurus anomalus», «Սովորական աղվես. Vulpes vulpes», «Հիրիկ Դմիտրիի. Iris demetrii» և «Տանձենի կովկասյան. Pyrus caucasica» 4 նամականիշը, անվանագինը՝ 320, 380, 500 և 560 դրամ, տպաքանակը յուրաքանչյուրից՝ 10 000 հատ:

4) Հայաստանի տեսարժան վայրեր. Հայաստանի տեսարժան վայրեր թեմային նվիրված «Հառիճավանք, VII-XIII դդ., Շիրակ. Harichavank Monastery, VII-XIII cc., Shirak», «Դեբեդի կիրճ, Լոռի. Debed Canyon, Lori», «Խոսրովի արգելոց (Վահագնի ջրվեժ), Արարատ. Khosrov Reserve (Vahagn Waterfall), Ararat» և «Գոշի լիճ, Տավուշ. Lake Gosh, Tavush» 4 նամականիշը, անվանագինը՝ 320, 380, 500 և 560 դրամ, տպաքանակը յուրաքանչյուրից՝ 10 000 հատ:

**ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված 1
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2023 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 14-Ն հրամանի



Հավելված 2
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2023 թվականի սեպտեմբերի 11-ը թիվ 14-Ն հրամանի






Հավելված 3
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2023 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 14-Ն հրամանի






Հավելված 4
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2023 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 14 Ն հրամանի






Հավելված 5
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2023 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 14 - Ն հրամանի






Հավելված 6
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2023 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 14-Ն հրամանի






Հավելված 7
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2023թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 14-Ն հրամանի






Հավելված 8
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2023 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 14-Ն հրամանի






Հավելված 9
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2023 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 14-Ն հրամանի






Հավելված 10
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2023 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 14 - Ն հրամանի




